

ԽՄԲԸԳՐԱԿԱՆՎԵՀԱՓԱՌ ՑՈՒՑԵԼԵԱՐ"Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՑ

Երուսաղէմի Ա. Յակոբեանց Միաբանութիւնը և անոր Ամեն. Գահակառ
լը խորունկ հաճոյքով է որ իրենց յարգանքին և սիրոյն տուրքը կը քերեն նոռ
քին Ս. Օծութիւն Տ. Տ. Գարեգին Կաթողիկոսի, Յորելինական այս հանդիսա-
ւոր մեծարանքին մէջ:

Հանդիսաւոր զիտակցութեամբ կ հրճուանքով, հայ ժողովուրդը, Ամերի-
կայէն մինչեւ Եղիպատոս և Սիւրիայէն, Լիբանանէն մինչեւ Կիպրոս և Պաղես-
տին՝ իր յարգանքի և սիրոյ մեծ բաժինը բերաւ և պիտի բերէ հայ մշակոյթի
այս մեծ վաստակաւորին և զմայելի եկեղեցականին, որ ոչ միայն մեր՝ այ-
այժմու բովանդակ քրիստոնէական եկեղեցոյ հազուազիւտ մեծերէն մէկը կրբ-
նայ նկատուիլ ապահով հպարտութեամբ:

Նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Գարեգին Կաթողիկոսը ոչ միայն մտաւորա-
կան ընտրանիի մը, այլ նաև իր անբասիր նկարագրով, արդիւնաւոր զործու-
նէութեամբ, և իր անձին ներշնչած պատկառանքով՝ առարկայ է այսօր բո-
վանդակ ազգին անսահման յարգանքին, հիացման ու սիրոյն: Իր վրայ կը փայ-
լին՝ ակնախտի շքանշաներու պէս՝ ձիրքեր, որոնց զուգակշիռը գծուար է ը-
նել, և որոնցմէ իւրաքանչիւրը կրնար նշանաւոր հանդիսացնել որ և է անհատ-
նել, և որոնցմէ կերպար նշանաւոր հանդիսացնել որ և է անհատ-
չիւրը կեանք ճշմարիտ կոչում ունեցող մը, բարոյական մարդ մը, բազ-
էողեկան կեանք ճշմարիտ կոչում ունեցող մը, պատահական մարդ մը, աննման քա-
մանուտ պատմաբանասէր մը, զրայէտ մը, արուեստագէտ մը, աննման քա-
մանուտ ժամանակ անդուլ և անյազ ուսանող մը, միշտ ի ինդիք նե-
րողիչ մը և նոյն ժամանակ անդուլ և անյազ ուսանող մը, միշտ ի ինդիք նե-
րողիչ մը անցեալ արժէքներու, ընդարձակ դաշտին վրայ անոր փա-
շներէն, մութերէն և աւերակներու ծովէն վերքերելու հայ հոգին կազմող
ասրերը: Երբ կը կենանք Վեհափառ Յորելեարով պայմանաւոր այս արդիւն-
քին դէմ, մեր միտքը կ'երթայ այդ բոլորը կարելի ընող, ի մի ձուլող և շքեղ-
քին դէմ, մեր միտքը կ'երթայ այդ բոլորը կարելի ընող, ի մի ձուլող և շքեղ-
քին պրիմակող մարդուն, անձնաւորութեան: Եքեղ է այդ անձնաւորութիւնը,
ու կարելի չէ չնիանալ զայն բարացուցող ու կազմող մտքի և հոգիի աւժերուն
առջեւ:

Յետագարձ ակնարկ մը իր կեանքին ու զործունէութեան վրայ, կրնայ
ցոյց տալ արգարեւ այդ անձնաւորութիւնը՝ իր հոգեւորական, իր զրչի մարդ-
էիր բեմի մարդ և վարչական զործերու, յանձնանձիչ: Իր եկեղեցական ասպարէ-
սուն

զին առաջին սանդղամատին վրայ իսկ՝ ուշազրաւ կը դառնայ Վեհը զրական և մանաւանդ բանահաւաքման և պատմական աշխատութիւններով։ Անհուն է իր վաստակը, նուիրուած մեր հսագիտական արժէք ներկայացնող վայրերու ու սումմասփրութեան, մեր ձեռագիրներու և մանրանկարներու մանրակրկիտ ու հմուտ պրապտումներուն։ Զենք զներ նոս ցուցակը իր զործերուն, հրատարակուած և անտիպ, որոնց թիւը քանի մը տասնեակ հատորներու կը հասնի։ Վեհափառ Յորելեարը մեծ ու բազմաբեղուն դէմք մըն է մեր արդի պատմազիտութեան, բանասիրութեան և զրչութեան ու յարակից արժէքներու կալուածին մէջ։ Իր բովանդակ կեանքը նուիրուած է այդ արժանիքներու վերբերման, որոնց ոչ միայն քանակը այլ մանաւանդ որակը ծանրակշիռ է ու պատկառելի։ Հասկընալու համար ատիկա պէտք է ճանչնալ անի՞հատ աշխատութեան, ջերմ հաւատքի և մեր արժէքներուն համար իր ունեցած պաշտանքին չափը։ Աստուծոյ և ազգին գերազանցապէս նուիրուած կործիչի այն հոգին, որ տարիներու անձանձը վ փոյթի, խորիմասա թափանցումի և աննահանջ խուզարկողի խորհրդանիշ անձնաւորութիւնը պիտի ընէր նորին Վեհափառութիւնը։ Իր խորին համոզումն է, թէ Աստուծած մեր մեծ ու երջանիկ նախնեաց կեանքով սքանչելի զործեր, հրաշքներ կատարած է մեր անցեալին մէջ, իր ճակատազրին բարձրութեան վրայ բռնելու համար մեր ազգը, ու պատմական անդրազարձումներուն իր մեծագոյն ճիզը եղած է ցուցնել այդ խորհուրդը։

Իր խօսքովը, իբր խանդավառ ու ընտիր քարողիչ, նորին Վեհափառութիւնը յայտնաբերած է ինքինքը իբր կրօնական մաքուր զարգացման ներշընչումի մարդը ի յայտ եկած մեր եկեղեցական բեմէն և ազգային ամպիռներուն վրայ։ Իր նուետորութեան յատկանիշերն են պարզութիւն, ջերմութիւն և թոփչք։ Պարզ են իր խօսքերը, որովհետեւ յստակ է իր մտածումը, ջերմ են իր արտայայտութիւնները՝ որովհետեւ հաւատքին հուրը կայ իր հոգին խորը, թեւ ունին իր մտածումները, որովհետեւ կուզան մեր շքեղ անցեալէն և մեր ժողովուրդի սրտառուչ ու մեծ արժանիքներէն։ Խօսքն ու զիբը սահկայն կենդանի ուժեր կը լինին մարդու մը շրթանց վրայ և մատներուն ներքեւ, երբ անոր անձնաւորութեան մէջ ստուգապէս կենդանի է հոգին, առանց այդ հոսքին չի կրնար եռուալ կաթսան։

Իր զրական, հնագիտական և բանասիրական ընդարձակ վաստակէն գուրս, նորին Ս. Օծութիւնը զանազան առաքելութիւններով ճամբորդած է բոլոր ոստաններ։ այս աշխարհամատսերուն վրայ իր վերջին շրջանը ըրաւ 1934ին, իբրի լիազօր նուիրակ և ներկայացուցիչ Ամենայն Հայոց Հայրապետի 1938 Սեպտ. 4ին Ամերիկայի Ազգ, Երեսփոխանական ժողովը, հակառակ իր կամքին զինք կ'ընտրէր Առաջնորդ Ամերիկանայութեան։ Հոս իր կազմակերպչական, կրթական և կրօնական աշխատութիւնները փրկարար դեր մը ունեցան պառակտուած այս զարութիւն մէջ։ Խոկ 1943ին Կիլիկեան թեմերու Ազգ. Ընդհ. ժողովը միաձայնութեամբ զինքը Կաթողիկոս կ'ընտրէր Մեծի Տանն Կիլիկիոս Աթոռին։

Ահա այս կարգի անստգիւտ արժանիքներով անձնաւորութիւն մըն է Յորելեար Հայրապետը։ Եկեղեցական մը՝ որ աւելի քան վաթսուն տարիներ ծառայած է իր ժողովուրդին՝ զրով, խօսքով ու զործով, իր կոչումին և դերին արժանավայել զիտակցութեամբ, որ հասկաւ ընտրեալներու առանձնաշնորհն է միայն։

Զառունանք հոս մատնանշել թէ Յոբելինական հանդիսութիւնները իրենց արդիւնքներով կը ձգտին շատ աւելի անդին քան յարզանքի սովորական արտայայտութիւնները, քանի որ անոնց արդիւնքը կոչուած է փոխուելու մեր ժողովուրդին անսպառ մէկ հարստութեան ընդմիշտ կորուստէ ազատումին։ Կ'ակնարկենք Վեհափառին գրական վաստակին հրատարակման կարելիութեան։

Երկու տարիներէ ի վեր նորին Վեհափառութեան ներկայութիւնը Մեծի Տան Կիլիկիոյ Աթոռին վրայ, այդ Աթոռը ոչ միայն իր բարոյական հմայքին և կարելի արդիւնաւորութեան մէջ վեր բռնած է, այլ զայն տակաւ անտեսական կացութեան մըն ալ տանելու աշխատանքներուն է լծուած Վեհափառը, Կիլիկիոյ տարագիր Աթոռը չնորին իր նախորդներուն ու մանաւանդ նորին Վեհափառութեան հեռահայեաց ճիզերուն, մօտ է ըլլալու մշակոյթ մը, ամբողջական կատար մը, կաթողիկէ մը հայ հոգիին վրայ։

Ու այս բոլորը զայու համար իր մեծ անձնաւորութեան տիրական հմայքին, որուն շողարձակութերն են ինչպէս ըսինք իր արժանիքները և անոնցմով պայմանաւոր իր արդիւնքները։

Անձնաւորութիւնը՝ խորհող և բարոյական մարդն է, որուն մէջ անձին խորազգաց զիտակցութիւնը այնքան ուժեղ է և բարձր, որքան աւելի բացուած և լուսաւորուած է իր մէջ անձնիշխանութեան և պատափանատուութեան ընթացուումը։ Վեհափառ Յոբելեարին մեծագոյն յատկանիշներէն մին է ազնուազգաց վատանութիւնը թէ պատճառ մըն է ինքը՝ որ ծնունդ պիտի տայ մեծ և բարի գործի։ Ու, օժտուած՝ գերազանց կորովով մը, կը քակէ իր մտային կեանքը բաղկացնող իրովութիւններուն հիւսքը, անոր մէջ ընդմուծելու համար զարգափարը զործի մը, որ, յետոյ պիտի լինի սկզբանաւորութիւնը շարք մը արդիւնքներու, որոնք պիտի փոյութիւն չունենային առանց իրեն։

Յորդարութիւնը հատուցած պիտի ըլլանք արդարէ թէ՝ պատմական և թէ՝ բարոյական ճշմարտութեան, անվարան ընդունելով թէ Մեծի Տան Կիլիկիոյ արդի Աթոռակալը Տ. Տ. Գարեգին Վեհափառ Յոբելեարը, հոգեբանական այս կարգի առեւալներու վրայ կանգնած անձնաւորութեան մը պատկերն է որ ի յայտ կը բերէ իր բովանդակ կեանքով ու նկարազրով։

Կարելի չէ, կ'ուզելինք ըսել այս էջերուն սկիզբը, ընթացիկ այս խօսքերով կշուել իր արժեքը. այսինքն ներս մանել իր անձէն՝ լոկ զիտական տըւեալներու ճամբով. վասնզի որ և է արժանիքէ աւելի՝ հոգիի մարդու արժանիքն է որ կը շշշառուի իր վրայ։

Նա՛ է հոգիի մարդը, որուն մէջ աստուածայինին ձգտումը կենդանի ոյժի մը փոխարկուած է, որուն մէջ հաւասաքը սիրոյ կը վերածուի կեանքի հարկադրած մեծ պարտականութեանց առջեւ. Սէր՝ որ գիւցազնութիւն կ'ըլլայ կամքին մէջ, և հանճար՝ ուղեղին խորը։ Սիրոյ վերածուած այդպիսի Հաւատքի կամքին մէջ, և հանճար՝ ուղեղին խորը։ Սիրոյ վերածուած այդպիսի Հաւատքի զործօն առաքեալի՝ այսինքն բռն հոգերոր մարդու ամենէն զմայելի տիպար մին է արդարէ Վեհափառ Յոբելեար Տ. Տ. Գարեգին Կաթողիկոսը Մեծի Տան Կիլիկիոյ։

Պատուելով այս հոյակապ հոգեկանը, ազգը ինքինքն է որ կը պատուէ։